

3

Կ Ր Օ Ն

Ամբողջ հողեկան կեանքը մի մեծ միութիւն է, թէև նրա ոյժերը զանազան ուղղութեամբ են տարածուում և նրանից ելած լոյսը հազարաւոր ճառագայթների է բեկւում: Որքան նախնական մարդը պարզ է, այնքան նրա հողու ամբողջութիւնը հեշտ է նկատուում: Կուլտուրական մարդն է, որ աշխատում է ինքն իրեն ճանաչել, իւր գործերը քննել և հողու ոյժերը զանազան խմբերի է բաժանում, որոշ համակարգութեան տակ է դնում:

Ո՛րքան անվերջ ու անմիտ բանակութիւններ են եղել այն հարցի համար, թէ արդեօք կան ժողովուրդներ, որ առանց կրօնի եղած լինեն կամ այժմ գոյութիւն ունեն, կամ այս կամ այն ժողովուրդը կրօն ունի՞ թէ ոչ: Այդ հարցն ըստ էութեան ուղիղ չէ դրուած: Այն, ինչ որ կուլտուրական ժողովուրդը կրօն է անուանում, երկարատե դարգացման ու աշխատանքի հետեանք է և այդ աշխատանքը զեռ ոչ մի աեղ չի վերջացել: Առնենք օրինակի համար հին յունական կրօնը, որ առաջին հայեացքից թւում է թէ որոշ կանոնաւորութիւն ունի, թէ կայ մի ընդհանուր համակարգութիւն այդտեղ. սակայն քննութեան դէպքում երևում է որ այդտեղ անկապ խառն դրութիւնն է գերիշխողը. մի տեղ օրինակ Զեսը այլ կերպ է երկրպագութեան առարկայ, հարեան երկրում այլ կերպ, երրորդ տեղը այդ նոյն Զեսը փոխարինուած է այլ աստուծով: Մինչդեռ յոյն բանաստեղծները և քրմերը աշխատել են իրենց կրօնը որոշ համակարգութեան տակ դնել, հոռմէացիք յոյներից փոխ առնելով աստուածները չկարողացան այդ անել: Հետեապէս նախնական ժողովուրդների կրօնը հետազօտողը հպիտի հարցնէ, թէ այս կամ ժողովուրդը կրօն ունի թէ ոչ, այլ կան կրօնի սաղմեր, որոնցից յետոյ աճում, զարգանում է յետագայում կուլտուրական ժողովուրդի կրօնը:

Կրօնի բոլոր նախադրիւրները մի ընդհանուր յատկութիւն ունին. բոլորն էլ վերաբերում են այնպիսի խնդիրներին, իրերին, որոնք եղակի անհատի գոյութեան նեղ սահմաններից դուրս են: Մարդկային գիտակցութեան մէջ ծագող այն բարձր ձգտումները, որոնց առաջ Փիզիքական գոյութեան բոլոր հարցերը նսեմանում են կրօնի նախադրիւրներն են: Այս շրջանում կրօնը հեռու է դատողութիւնից և աւելի մօտ է կէս գիտակցական երևոյթներին. այն խնդիրներն է շօշափում, որոնց մարդ զգացմունքով է ըմբռնում: Գիտութիւնը յաճախ փոթորկի նման աւերել է առասպե-

լարանութեան կառուցումները և շատ հոգիներից խել է կեանքի դառնութիւնների ժամանակ նաւահանգիստ եղող կրօնական զգացումը: Կրօնը մի տեսակ կանացի յատկութիւններ ունի, գիտութիւնը—առնական. կրօնը արձագանք է մարդկային սրտի այն ամենի նկատմամբ, որ կատարւում է դրսի աշխարհում և այս է պատճառը, որ նա իւր գոյութիւնը շարունակում է առանց տրամաբանութեան, կէս գիտակցական ձևով:

Կրօնի սկզբնաւորութիւնների մեծ մասը անձնական բնոյթ ունի, որը կարելի է բացատրել մի անհատի կամ մի խմբի հոգեկան տրամադրութեամբ. իսկ դրսի մարդկանց համար այդ թւում է անհասկանալի, անմիտ բան. այդպիսի երևոյթներ են օրինակ Աֆրիկայում կախարհներին այրելը որ և է մէկի մահուանից յետոյ, որ և է վերահաս վտանգի ժամանակ սեփական երեխաներին զոհաբերելը: Իւրաքանչիւր կրօնի հիմնական սկիզբը եղող ազդիւրը նպատակութեան զգացումն է: Այս բանն երկու կերպ է երևում. նախ բնութեան ոյժերը, որոնցից կախուած է անմիջապէս մարդու կեանքն ու բարեկեցութիւնը յաճախ անսպասելի ոյժով ցոյց են տալիս իրենց իշխանութիւնը մարդուն, երկրորդ համակեցութեան կազմակերպուած ձևերը, որոնց առաջ անհատը երևում է իբրև ջրվէժի մէջ եղող մի կաթիլ, որի մէջ արևի ճառագայթները մի վայրկեան միայն կարող են անդրադառնալ և այնուհետև նա կկորչի անհետ: Այս ոյժերի մէջ է մարդը և նա պէտք է աշխատէ այսպէս թէ այնպէս ըմբռնել այդ եթէ խաղաղ կենցաղի ժամանակ չի զգում այդ ոյժերի ազդեցութիւնը, դժբախտութեան, վտանգի ըռպէին նա կարիք է զգում որ և է ոյժի օգնութեան դիմել և պաշտպանուել: Նախամարդի համար բնութեան օգտակար ու փնտսակար ոյժերը գիտակցօրէն են գործում և այնպիսի էակներ են, որոնց վրայ կարելի է ազդել խնդրելով, ընծաներով, համոզելով: Նրա համար ամբողջ բնութիւնը կազմուած է շնչաւոր առարկաներից, այս աշխարհայեացքն անուանում ենք ակնմիզմ: Աւելի ուժեղ է այն զգացումը, այն կապը, որը նախամարդն ունի մեռածների նկատմամբ. նրա մէջ ծագում է մի զգացում, որ մեռածը շարունակում է մասնակցութիւն ունենալ կենդանի մնացածների ուրախութեան ու տրտմութեան մէջ, որ նա կարող է իրենց օգնել, մանաւանդ աւելի շատ փնտսել: Այս զգացումն այնքան ուժեղանում է, որ ամեն բան վերադրւում է սրան, ստանում է անճոռնի արտայայտութիւններ և հասնում է հրէշաւորութեան: Այս երևոյթի համար կազմած տէրմինը՝ «Նախնիների պաշտամունք» շատ էլ յաջող չպէտք է համարել, որովհետև յաճախ նախնիների պաշտամունքի մասին խօսք չէ լինում այդտեղ. աւելի յարմար է Լ. Ֆրօբենիուսի տէր-

մինը—մանրիզմ, կազմուած հոռմէական մանի բառից, որ նշանակում է նախահօր ոգի:

Որքան էլ կրօնը զգացմունքի աշխարհին է պատկանում, բայց բանականութիւնն անուամենայնիւ որոշ դեր կատարում է, մի բան, որ կրօնի զարգացման բարձր աստիճանում պարզ երևում է: Կրօնն էլ աշխատում է բացատրել, վճռել գոյութեան զանազան հարցերը միայն ոչ թէ փորձի միջոցով, այլ ստեղծադործող ոյժերի ազատ խաղերի ճանապարհով: Բնութեան երևոյթներին տուած բացաղբութիւնը կրքեր չի յարուցանում և կրօնի մէջ այդ մասը պակաս բանական է, այդ մասը կոչւում է առասպելաբանութիւն. (միւթօլօգիա): Կրօնի մէջ աւելի մեծ տեղ են բռնում այն գործողութիւնները, որոնք կատարւում են գոյութեանը փնասակար երևոյթները հեռացնելու դիտումով: այս դէպքում տեսնում ենք զարգացման երկու ուղի. պաւտոմոնիֆ (կուլտ), երբ մարդը խնդրով ու զոհաբերութիւնով աշխատում է բարձրագոյն ոյժերի օգնութիւնը և ողորմածութիւնը ձեռք բերել: միստիկա (խորհրդաւորութիւն) երբ մարդն իր մէջ զգում է ինչորոշ երկրային, գերմարդկային ոյժ և այդ խորհրդաւոր ոյժը նրա մէջ ապրում է անդիտակցօրէն և ստիպում է նրան գործ կատարել և ուրիշ ոյժեր իրեն ծառայեցնել: Միստիկան ցածր աստիճաններում արտայայտւում է շամանականութեան, մոգութեան, կախարդութեան և նման այլ ձևերով: զարգացման բարձր աստիճանում այդ կամ աւելի նուրբ ձևերով է երևում կամ ետ է մղւում, թէև անյետ չի կորչում: Գուցէ հնարաւոր կլինի իրրև կրօնի ցածր աստիճան նկատել Ֆետիշիզմը, երբ մարդ պատահաբար հանդիպած կամ երևակայութեամբ ստեղծած իրին երկրպագում է և մտածում, որ իւր վրայ կարող են ազդել: Այստեղ որոշ դադափար փնտրելը դժուար է: Ֆետիշիզմը իւր սկզբնական արտայայտութիւններով երևան է եկել ոչ թէ արևմտեան Աֆրիկայում, ինչպէս ենթադրւում են, այլ Վեստ-ինդիայի քրիստոնեայ դարձած նեգրների մէջ:

Զարգացման բարձր աստիճանում առասպելաբանութիւնը որոշ ամբողջութիւն է կազմում, իսկ ցածր աստիճաններում առասպելները միմիանցից անկախ գոյութիւն են ունենում, առանց որոշ կապի: օրինակ գրեթէ բոլոր ժողովուրդների մէջ համատեղութիւնների ծագման մասին առասպելներ կան, բայց զրանք միայն երկրորդական նշանակութիւն ունին. զրանք շատ հազուադէպ դէպքերում աստղերի պաշտաման հիմք են դառնում: Ընդհակառակը պաշտամունք առաջ է գալիս որոշ դժբախտութեան ժամանակ, երբ մարդիկ ստիպուած ուզում են չար ոյժին ողորդել և ամեն տեսակ միջոց գործ են դնում, մինչև որ զրանցից մէկը,

իրենց կարծիքով, դառնում է օգտակար: Այս տեսակ պաշտամունքները, հաւատալիքները երկար ժամանակ մնում են առանց որեւէ կապ ունենալու կրօնի հետ. օրինակ «չար աչք»-ից սուղացած վախը և նրա դէմ գործադրուող միջոցները մինչև այժմ էլ մնում են: Ընդհանրապէս յաճախ ցածր ձևերը բարձր ձևերի հետ գոյութիւն են ունենում: Այժմ էլ գերմանացի գիւղացին գնում է եկեղեցի աղօթելու, տանն էլ թալիսմաններ է պահում*):

Ընդհանրապէս կրօնը իւր սկզբնաւորութեան շրջանում և այժմ էլ գործ ունի գերբնական ոյժերի հետ: Կրօնն է, որ մարդկանց վարմունքները, սովորութիւնները կանոնաւորում է և որոշ գոյն է տալիս նրանց: Կրօնը մարդկութեան ամենամեծ բարիքներից է և նա չպէտք է ոչնչանայ, եթէ մարդը պէտք է միշտ առաջադիմէ և ոչ յետադիմէ: Ամբողջ կուլտուրան ցոյց է տալիս, որ մեր ուղին մեզ տանում է անձնական գոյութեան նեղ սահմաններից դուրս, նա ցոյց է տալիս, որ մենք պատկանում ենք մի մեծ ամբողջութեան և բոլորս էլ մի նպատակի ենք դիմում: Կրօնը հաւատացողին ոյժ է ներշնչում, վստահութիւն, մի բան, որ ոչ մի այլ ոյժ չի կարող անել: Կրօնը մարդկութեան հետ զարգանում է: Կրօնը վայրենիների մէջ կոպիտ էր և վայրենի. զարգացման շնորհիւ նա էլ բարձրացաւ, մինչև որ ձեռք բերեց այն բարձր մաքրութիւնը և ոյժը, որոնց շնորհիւ անթիւ սերունդներ բարձրացան անկումից և դիմեցին դէպի բարձր կուլտուրան: Ճիշտ է կրօնը իւր զարգացման ճանապարհին ունեցել է սխալներ, բայց այդ սխալները ներելի են, որովհետև կրօնի մէջ սկզբըներում բանականութիւնը քիչ տեղ է բռնել: Կրօնը դանդաղ է առաջ գնում, բայց նա այնպիսի ոյժեր կարող է յայտնագործել, որոնք բանականութեան համար կմնան իբրև եօթն կնքով կընքուած գիրի: Կրօնի և բարոյականութեան մերձեցումը դանդաղ աստիճանաւորութեամբ է կատարուել: Կրօնն արդէն սկզբնական շրջաններում մեծ ազդեցութիւն է ունեցել բարքերի վրայ և շատ կոպտութիւններ, դազանութիւններ մարդկային հասարակութիւնից մէկդի է վանել: Հետզհետէ ծագում է ընդհանուր Աստուածութեան զաղափարը, որի հրամանին պէտք է ենթարկուեն բոլորը. ծագում է այն միտքը, որ ամբողջ գոյութիւնը մի է. այս զաղափարը զանազան ազգերի մէջ զանազան ձևերով է արտայայտուում: Հին Հելլադայում կազմում է ճոխ առասպելաբանութիւն, Չինաստանում զլիաւոր ոյժը բուդդայականութիւնն է

*) Մեզանում այս երեւոյթը աւելի մեծ չափերով է տարածուած. խուլ անկիւններում կախարհութիւնը, թալիսմանը մեծ դեր են կատարում: Կազմող

ստանում, շնորհիւ Կոնֆուցիուսի (Կոն—խու—ձէ), հնդիկների մէջ՝ միստիցիզմը. ժողովրդի բնաւորութիւնն ազդում է կրօնի վրայ: Եթէ այժմ մի համաշխարհային կրօն քարոզուէր, ոչ ուշ քան 100 տարի յետոյ իւրաքանչիւր ժողովուրդ իւր տեսակի փոփոխութիւն կստեղծէր, կյարմարեցնէր իւր բնաւորութեանը: Այս տեսակէտից սոսկալի օրինակ է ներկայացնում քրիստոնէութիւնը, սրբ զանազան ազգերի մէջ ստացել է զանազան ձևեր, կազմուել են զանազան ազգային եկեղեցիներ:

Անիմիզմին ու սկզբնական առասպելաբանութեանն են պատկանում այն բացատրութիւններն ու առասպելները, որոնք վերաբերում են բնութեան իրերին և երևոյթներին. բայց զրանք մարդկանց յարաբերութիւնների վրայ ազդեցութիւն չունին: Այսպէս օրինակ զանազան ազգերի ու ցեղերի մէջ աստղերի ու համաստեղութիւնների մասին եղած բացատրութիւնները մտացածին են մեծ մասամբ. Բօրօցիչը հարաւային խաչ (ЮЖНЫЙ КРЕСТ) համաստեղութիւնը համարւում է մեծ ջալլամի մասնիկ. Խօթնաստեղունքը անգիկօ ծառի ծաղիկների փունջ: Մի քանի տեղերում հաւատում են աստղերի ոյժին^{*}), աւելի յաճախ աստղերին կապում են իրենց նախահայրերի հետ. աւստրիալացիք Խօթնաստեղունքը ընդունում են, որ մի խումբ կանայք են, որոնք շատ վաղ ժամանակներում երկինք են թռել: Պօլինէզիայում աստղերին համարում են մեռածների հոգի կամ աչք: Արևի և լուսնի մասին, մեր հասկացողութեամբ, երեխայական առասպելներ կան. կարծում են, որ լուսնի վրայ ևս կանայք, տղամարդիկ, ծառեր կան. յաճախ ընդունում են, որ ցեղի նախկին հերոսներն են լուսինն ու արևը, երբեմն էլ հոգիների բնակարան են համարում:

Լոյսի պաշտամունքը զարգացել է երկրագործ ու անասնապահ ժողովուրդների մէջ. աւելի առաջ ուշադրութեան արժանի են եղել փայլակն ու կայծակը, որոշ տեղերում ընդունում են, որ կայ որոտի որոշ թռչուն. հին աշխարհում ընդունում էին, որ կայ հրէշ—որոտ: Գրեթէ ամեն տեղ տարածուած է այն առասպելը, որ կայծակի հետ ցած է ընկնում ինչոր զէնք. սովորաբար քարէ մուրճ. այս հաւատը կապուած է մէտէօրաքարերի ընկնելու դէպքերի հետ: Մէկկայի Քաարայի սրբազան մէտէօրաքարը մինչև այժմ էլ իւր նշանակութիւնը պահել է: Յաճախ որ և է ծառ, քար պաշտաման արարկայ է ոչ թէ նրա համար. որ բնութեան որ և է ոյժ ունի իւր մէջ, այլ որովհետև դրա հետ կապուած է որ և է

^{*}) Մեղանում եւս աստղերի ոյժին հաւատում են. օրինակ չար ու բարի աստղի տակ ծնուածներն են ընդունում:

նախորդի հոգին: Ժողովրդին հարցնել, որ բացատրի պաշտուղ առարկայի իմաստը կարող է թիւրիմացութեան մէջ ձգել, որովհետեւ յաճախ ժողովուրդը մոռացած է լինում նախկին հայեացքը և երեւոյթը պաշտում է առանց հասկանալու: Մաքուր անիմիստական հայեացքները երևում են պտղաբեր բոյսերի պաշտամունքի մէջ. Հնդկաստանում Լոտոսը իսկական երկրպագութեան առարկայ է: Ծառերը երկրպագութեան առարկայ են լինում նաև նրա համար, որ կրակն ստացւում է փայտի ամուր շփումից և հնթաղւում է, որ ծառի մէջ ինչ որ ոյժ կայ: Վեդաների մէջ յաճախ յիշւում է, որ կրակը ստացուել է բոյսից, կամ բոյսի միջոցով: Յաճախ, երեխան ծնուելուց յետոյ ծառ են տնկում և նորածնի կեանքը կապում ծառի կեանքի հետ. եթէ ծառը ոչնչանայ, չորանայ ծնողների կարծիքով երեխան էլ կոչնչանայ և ընդհակառակը. այս բանը տարածուած է Եւրոպայում և Աֆրիկայում: Մալայեան ցեղի մէջ ծառը տնկում են նրա համար, որ երեխայի հասակը չափեն, աճելութիւնը որոշեն: Երբեմն ամբողջ անտառներն են պաշտում*): Ենթադրում են, որ այդ անտառներում ոգիներ կան, որոնք կարող են կախարդել մարդկանց: Ամազոն գետի մօտ ապրողները ենթադրում են, որ կայ անտառի Պզի ծերունի, երկար միրուքով և հուր բերանով, արձագանքը մի թզուկ է, որ ապրում է ծառերի դագաթներին, որսորդներին խաբում է, ճանապարհը մոլորեցնում: Ֆիննական անտառի ոգիները աւելի բարի են. նրանք մարդու մեղք են տալիս կամ մեղքից պատրաստած խմիչք:

Դիտերի պաշտամունքի մէջ կան և անիմիստական և մանիստական հայեացքներ իբար խառնուած: Ամուր գետի եզերքներում ապրող գիլիականները, գարնանը, երբ գետերն սառոյցից տղատւում են, նաւակներով գնում են գետի վրայ և գետին զոհում են, գետի մէջ գցելով՝ պտուղներ, ցորեն, ծխախոտ և այլն. ռուսների մէջ այժմ էլ մի քանի տեղերում գետի վրայով գնալուց առաջ ճանապարհորդները գետի մէջ պղնձէ դրամներ են ձգում: Ջրային ոգիներն երբեմն ունենում են օձի կամ ջրային որևէ կենդանու կերպարանք: Դասական աշխարհում կամուրջ շինելը դժուար բան էր. գետի ոգուն յատուկ քրմեր յատուկ աղօթքներ էին անում: Տիրեր գետի վրայ երկար ժամանակ չէին կարողանում կամուրջ շինել, բացի մի կամուրջից—Pons Sublicius, որի շինութեան ժամանակ միայն փայտ կարելի էր գործադրել: Ա.

*) Հեթանոս հայերը պաշտում էին Սոսեաց անտառը, նուիրում:

թէնքում կար մի տոհմ, որը միայն կարող էր Իլլիսուն գետի վրայ կամուրջ շինել:

Առանձին ձեռով զարգանում է քարերի և լեռների պաշտամունքը, որոնց մէջ ապրում են զանազան ոգիներ. քրիստոնէական ժամանակներում նոյն իսկ ենթադրում են, որ լեռներում ապրում են սատանաներ, որոնք երևի հին ժողովրդների աստուածների ոգիների տեղն են բռնել: Յատկապէս շատ առասպելներ կան արևմտեան Ամերիկայի հնդիկների տարօրինակ ձևեր ունեցող ժայռերի մասին: Երկրագործ ժողովուրդները հակումն ունին հողն էլ համարելու շնչաւոր առարկայ. այս հասկացողութիւնը զարգացած առասպելաբանութիւնների մէջ ծառայում է աղբիւր զանազան առասպելների: Հողին հակառակ երևում է մթնոլորդը և քամին, որոնք առանձին աստուածներ ունեն և յատկապէս արեական առասպելաբանութեան մէջ սրանք մեծ դեր են խաղում: Գերմանական Վոլանը՝ փոթորկի մարմնացումն է. ըստ Վիլհելմ Ռօշէրի յունական Հերմէսը և Պոսէյդոնը առաջ քամիների աստուածներ են եղել, յետոյ են փոխել իրենց բնաւորութիւնը:

Կրակը նոյնպէս պաշտամունքի առարկայ է. նրան զոհում են կերակուրներ, որովհետեւ ենթադրում են, որ նրա մէջ ոգի կայ, որը պէտք է կերակրուի: Կրակի պաշտամունքն ամեն տեղ պարզ է. իրանական ցեղերի կրակը, յունական կրակը Դելֆիսում, Ոլիմպոսում, Հռոմի կրակը Վեստայի տաճարում գլխաւոր պաշտաման առարկաներ չէին, այլ պաշտամունքի անհրաժեշտ մասը: Հին Հնդկաստանում միայն կար կրակի Ագնի աստուածը, որին հիւսիսում համապատասխանում է Լօկի աստուածը:

Որքան և նախնական մարդը հակումն չունենայ իրերի խորքը թափանցելու, այնուամենայնիւ գծուար թէ գտնուի մի ժողովուրդ, որին չհետաքրքրէին այնպիսի հարցեր, ինչպէս օրինակ ռոտեղից են առաջ եկել երկիրը և մարդիկ, որոնք այսպէս թէ այնպէս չձգտէին այդ հարցերին որ և է պատասխան տալ: Այն հանդամանքը, որ ձուերից կենդանիներ են առաջ գալիս նախնական մարդուն շատ հետաքրքրում է, ուստի ենթադրում են երբեմն, որ ամբողջ աշխարհն էլ ձուից է առաջ եկել կամ մարդիկ են ձուից առաջ եկել, առանց հարցնելու, թէ այդ ձուն ռոտեղից է առաջ եկել: Պօլինէզական աստուած Տանգօրան ինքը ձուից է ելնում և ապա բոլոր մարդկանց ստեղծում. ըստ Նոր-Չէլանդիայի առասպելի մարդիկ առաջ են եկել նաւակի մէջ ծովի վրայ լողացող ձուից և ապա նաւակ նստելով իջել են հողի վրայ: Երբեմն ինչ որ ահագին թռչուն է ստեղծում աշխարհը, իսկ թռչունի ծագումը մնում է անորոշ: Ըստ բատտակների առասպելի սկզբում մի ահագին արագալ է եղել, որը նստել է երեք ձուի վրայ և հանել է

մի տղայ և երկու աղջիկ. այդ ձուրի առասպելի նման առասպելներ ունեն հնդիկները, չինացիք, յոյները, փիւնիկեցիք և ուրախան—ալտայեան ցեղերը։ Համաձայն այլ առասպելների սկզբում լինում են առասպելական դադաններ, որոնց աստուածները կամ նախամարդը ոչնչացնում են և որոնց մարմնից և արիւնից կազմւում է հոգն ու ծովը։ Մարդի ստեղծագործութիւնը շատ տեղերում կաւից են համարում, մի բան, որի մասին Աստուածաշնչի մէջ ևս կայ յիշատակութիւն։ Առանձնապէս տարածուած է այն հաւատքը, թէ մարդիկ առաջ կատարեալ կերպարանք չունէին, նրանք կրկնակի էին կամ միասին աճած, յետոյ աստուածները նրանց բաժանում են և տալիս ներկայ կերպարանքը։ Պօլինէզացիք որովհետեւ մեծ մասամբ ձկնորսներ են, հաւատում են, որ աստուածները զանազան կարթերով ծովի տակից հանել են երկիրը։

Աւելի մութն է յունական Դեկալիոնի և Պիերի առասպելը, որի համաձայն գետնի վրայ քարեր են ցանւում և այդ քարերից մարդիկ են բուսնում։ Մանդան ցեղը ենթադրում է, որ նախամարդն առաջ գետնի տակն է ապրել, յետոյ է միայն դուրս եկել գետնի երեսը. հարաւային Աֆրիկայում Բանդու ցեղը ենթադրում է, որ մարդիկ այրերից են առաջ եկել։ Սամոու և Տոնգու կղզիների ցեղերը ենթադրում են, որ մարդիկ որդից են առաջ եկել։ Յիշւում է և այն, որ մի աստուած չէ ստեղծում աշխարհը և մարդիկ, այլ մասնակցում են նաեւ ուրիշ ոյժեր, ուրիշ աստուածներ. յիշւում է և այն, որ եղել են մարդիկ աշխարհի ստեղծագործութիւնից առաջ, բայց աստուածները դրանց ոչնչացրել են ջրհեղեղով, երբեմն էլ կրակով։ Ռիխարդ Անդրէն հաւաքել է ջրհեղեղի մասին եղած առասպելները, թուով 80 հատ և ցոյց է տուել, որ բոլոր ժողովուրդներն ունեն այդ։ Նոյն տեսակի է և Ս. Գրքի ջրհեղեղի պատմութիւնը, որն առաջ է եկել Բաբելոնի հարթավայրում. ինչպէս որ համաշխարհային ձուրի առասպելը պատճառ է եղել, որ միտք ծագի, թէ եղել է մի նախաթոշուն, որ այդ ձուն ածել է. այնպէս էլ նախաովկիանոսի առասպելը պատճառ է եղել, որ առաջ գայ ջրհեղեղի առասպելը, որի համար հիմք ծառայել է բնութեան մէջ պատահող ջրհեղեղը։

Մի խումբ պարզ առասպելների մէջ բացատրւում է ցեղերի արտաքին տարբերութիւնների պատճառը։ Մարդկանց մահը բացատրւում է շատ միամիտ կերպով. առասպելն ասում է, որ մի դադան երկնքից իջել է. և փոխանակ ասելու, որ մարդիկ անմահ են, սխալուել է և այդ ժամանակից մարդիկ մեռնում են։

Կրակի գիւտն էլ առասպելական ծագումն ունի. կրակն աստուածային շնորհ է համարւում, ըստ առասպելների կրակը մեծ

մասամբ զողանում են թռչունները: Հիւսիս արեւմտեան Ամերիկայի տլինկիտների մէջ կրակը ըստ առասպելի ագռաւն է զողացել ինչ որ կղզուց և ճանապահնին ինքն էլ փխտուել է. աւելի հարաւ Հուտուլու ցեղի մէջ գայլն է համարուում կրակը զանողը կամ կտցահարը, ըստ յունականի Պրոմէթէոն է զողացել աստուածների մօտից կրակը և պատժուել է: Զօն Ռեօսկինն ասում է «Անկարելի է առասպել ստեղծել, եթէ դրա կազմութեան համար նիւթ չկայ. եթէ առասպելի մէջ պատմուում է երկնքի մասին, այդ կստեղծէր նա, ով իւր հայեացքը երկինքն է ուղղել. եթէ առասպելի մէջ խօսուում է ճշմարտութեան, հոգու ոյժի մասին ապա այդ կարող էր ստեղծել, նա, ով հասկանում է, ինչ է ճշմարտութիւնը և հոգու ոյժը...»:

Թափառականների մէջ, որոնք մշտական ապրելու տեղ չունեն և կապուած չեն այն վայրերի հետ, որտեղ թաղուած են իրենց ազգականները, ուրուականների երկիւղը քիչ է զարգացած, զրուիւթիւնը փոխուում է, երբ ժողովուրդն սկսում է հանրակեաց կեանք և դառնում է անշարժ սեփականութեան տէր: Մեռեալին տանից դուրս տանելու ժամանակ, որպէսզի նրա հոգին տանը չմնայ և իրենց երկիւղ չազդէ, աղմուկ են բարձրացնում, զորզոռում են, նետեր են արձակում և կամ թաշկինակներ են թափահարում, ծառի ճիւղերով են քշում. Մաղազասկարում քարեր են շարտում, իսկ Նոր Գլինէայում մեռեալին վախեցնում են զանազան սպառնալիքներով: Ինդոնէզիայում մեռեալին դռնից չեն հանում դուրս, այլ պատի մէջ անցք են բանում, մեռեալին դուրս տանում, նորից անցքը փակում, որ մեռեալը ճանապարհը չգտնէ: Օրինօկո գետի մօտ դիակից մինչև անտառը թել են կապում, որ հոգին շուտով դուրս գայ, տանը չմնայ: Երբ տեսնում են, որ մեռնողը դեռ «հոգու հետ կուում է» աշխատում են հոգին յետ դարձնել, օրինակ չինացիք աշխատում են հոգուն երաժշտութեամբ գրաւել կամ աղմուկ են բարձրացնում, որ հոգին վերադառնայ: Առհասարակ հոգիները, իբրեւ ուրուականներ միայն չարիք կարող են պատճառել, բայց և կան տեղեր, ուր հաւատում են, որ մեռած մայրերը, երբ փոքր երեխաներ են ունենում, գիշերները ուրաւականի ձևով գալիս են կերակրում ու խնամում նրանց. այս հաւատքը կայ Եւրոպայում, Չինաստանում և այլ տեղեր: Եթէ ուրուականներին հաւատացողներին հարցնելու լինեն, թէ ինչ բան են ուրուականները, ոչ ոք որոշ բան չի ասի. նախամարդկանց և ցածր կուլտուրայի տէր ցեղերի տրամաբանութեան մէջ այնպիսի հակասութիւններ են իրար մօտ գոյութիւն ունենում, որ լուրջ մտածողի համար անտանելի կլինի: Շատերը կարծում են, որ հոգին կամ կեանքի ոյժը շունչն է և հոգին

մարմնից հեռանում է վերջին շնչի հետ. յունական πνεύμα բառը նշանակում է և է ոգի և շունչ. յաճախ մարդու հոգին համարում են ստուերը. այս հայեացքը տարածուած է էսկիմոսների և մաօրինների մէջ, այս հաւատալիքի մնացորդները կարելի է տեսնել դասական ժողովուրդների և չինացիների մէջ: Ենթադրում են, որ հոգին ապրում է մարդու որոշ տեղերում օրինակ կամ սրտում կամ ուղեղում կամ փայծաղում, երիկամունքներում, արեան մէջ:

Ըստ ինքեան հասկանալի է, որ հոգիներն անտեսանելի էակներ են, բայց կան առանձին ընդունակութիւններով օժտուած մարդիկ, որոնք կարող են նրանց տեսնել: Կարծում են, որ, որոշ կենդանիներ, օրինակ ձին, շունը տեսնում են և որոշ պայմաններում կարող են ուրուականներին մարդկանց տեսանելի դարձնել: Հոգին այն ձևով է մնում, ինչ ձև ունեցել է մեռնողը մահուան բոպէին. եթէ մեռնողը ծեր է, ծերի ձևով է երևում, եթէ վիրաւորուած է վիրաւորուածի ձևով և այլն: Տիփնկիտները իրենց մեռելներին այրում են, որ հոգիները միւս աշխարհում տաք և լուսաւոր լինին: Իրենց թշնամիների զանգերը հաւաքում են, որ միւս աշխարհում նրանք առանց զլխի լինեն. ոմանք ընդունում են որ կախազան բարձրացրածների հոգիները մնում են ներսը: Ոմանք ընդունում են, որ հոգիները թռչուններ են. տարածուած է և այն հաւատը, որ մեռածների հոգիները անցնում են կենդանիներին, բոյսերին և նորածին մանուկներին: Գերմանական առասպելներում քնած ժամանակ մարդու հոգին մկան ձևով ելնում է բերանից և արթնանալուց առաջ նորից վերադառնում է իշամեղուի ձևով: Բուրեատները կարծում են, որ մահուանից յետոյ իրենք մեղու են դառնալու, իսկ մաօրիները կարծում են, որ իրենց ցիդալիցների հոգիները մողէսների մէջ են մտնում: Օձի պաշտամունքը և օձը տանը պահելը այս հասկացողութեան հետեանք է. գիլիակաները կարծում են, որ արջից սպանուած մարդու հոգին արջ է դառնում: Մառերի և բոյսերի մէջ էլ է մտնում հոգին. կան սրբազան ծառեր, որոնց մէջ մեռածի հոգին է ապրում և այդպիսի ծառերը չի կարելի կտրել:

Որքան էլ հոգին ելնէ մարմնից, այնուամենայնիւ մի բան մնում է մարմնի մէջ. հետեապէս պէտք է ուշք դարձնել մարմինը թողնելու ձևի վրայ ևս. որտեղ կայ աւանդութիւն այնտեղ մնացորդները, աճիւնը սրբութեամբ պահում են: Նախնիներին աշխատում են նկարել զանազան մեծութեամբ և այդ ձևով պահել: Նկարները լինում են զանազան ձևերի, ինչպէս և սրանց պահելու ձևերը. փոքր դիրքով նկարները զարդերի տեղ են ծառայում, փողի քսակի մէջ են պահում, իսկ մեծերը դնում են տանը կամ

գերեզմանոցում: Պօլինէզիտյի շատ տեղերում տարածուած է այն կարծիքը, որ հասարակ մարդկանց և ազնուականների հոգիներն էլ տարբեր են լինում. ազնուականների հոգիներն անմահ են, իսկ հասարակ ժողովրդի հոգին այդ արտօնութիւնից զուրկ է և մահուանից յետոյ իսկոյն ոչնչանում է: Նոր-Հիւրբետեան կղզիներում հաւատում են, որ հոգին միւս աշխարհում 3—7 անգամ մեռնում է և ապա վերջնականապէս ոչնչանում:

Թէ ռրտեղ են գնում մեռածների հոգիները, այդ հարցը նախնական ժողովուրդներին շատ է զբաղեցրել. մեծ մասամբ ընդունել են, որ կայ առանձին մեռածների աշխարհ և այդ աշխարհը ստորերկրեայ է: Մի ցեղի մէջ Շրէնկը հարց ու փորձի է ենթարկել, թէ ինչպէս են հասկանում այն աշխարհը և նրան ասել են, որ այնտեղ էլ այնպէս է, ինչպէս մեզանում. այնտեղ էլ կայ լուսին, արեւ, Մանգու (Ամուր) գետը, կան լեռներ, գազաններ, բոյսեր. կան զանազան ընտանիքներ, ցեղեր. տարբերութիւնն այն է, որ երբ այստեղ ամառ է, այնտեղ ձմեռ է, մարդիկ շները սանաւներին լծած պտտում են, երբ այստեղ ցիւրկ է, այնտեղ գիշեր է: Կամչատկայում ապրողների կարծիքով միւս աշխարհը նոյնպէս այս տեսակ է, այնտեղ գնում են ոչ միայն մարդկանց այլ կենդանիների հոգիները և ապրում են նոյն ձևով, ինչպէս այս աշխարհում էին: Մովսիսեայ ժողովուրդները մեծ մասամբ ենթադրում են, որ միւս աշխարհը կղզի է, որն արեւմուտքում է գտնւում, շատ հեռու, շատ ցեղեր միւս աշխարհին երևակայական անուններ են տալիս: Եւրոպական առասպելներն էլ ինչ որ հրաշալի երկրի մասին են պատմում, որը գտնւում է արեւմուտքում, ովկիանոսից այն կողմը. հին գերմանները կարծում էին, որ միւս աշխարհը հիւսիսում է գտնւում, ուր մշտական խաւարն է իշխում. մեծ մասամբ ընդունում են, որ միւս աշխարհը արեւմուտքում է. Նոր Գվինէայի բնակիչները ենթադրում են, որ հոգիների բնակավայրը լեռներն են. նոյնն են կարծում և Մալայեան արշիպելագում. թէ ինչպէս աստուածների և հոգիների բնակավայրը լեռներից փոխադրւում է երկինք երևում է յունական Ոլիմպոս սարի օրինակից, որտեղ առաջ բնակւում էին աստուածները, ապա փոխադրւում են երկինք. շատ լեռների անուններ դեռ այժմ էլ ցոյց են տալիս, որ աստուածներն առաջ այդ տեղերում են ապրել, յետոյ փոխադրուել երկինք:

Միւս աշխարհ գնալը շատ դժուար է համարւում. միւս աշխարհ գնալու մասին եղած պատմութիւնների մեծ մասը յիշեցնում է սարսափելի երազներ: Որտեղ կարծում են, որ միւս աշխարհը ծովի կամ գետի միւս կողմն է, ստեղծւում է մեռելների յատուկ նաւի առասպելը. ուստի յաճախ մեռելներին դնում են

հաւակներում կամ հաւակածե դադաղներում, այլ և դրամ են դնում, որ մեռեալը վճարէ հաւի վարձը, կարծում են հաւ, որ կայ յատուկ թռչուն, որ մեռեալի հոգին իւր մէջքն է առնում ու տանում միւս աշխարհը: Ուրիշ առասպելներում հոգին պէտք է մեծ վիհների, կամ դժուար կամուրջների վրայով անցնի. հիւսիսային Ամերիկայի հնդիկները ենթադրում են, որ հոգին պէտք է բարձրանայ ողորկ ծառի բնի վրայով կամ մեծ օձի մէջքի վրայով. իրանցիք ընդունում են, որ կայ մի կամուրջ՝ Զինվար, որի վրայ կան հսկիչներ և չար մարդկանց հոգիները ցած են գլորում. մահմադականների աւանդութիւնների համաձայն կամուրջը բարակ թելից է կամ մազից և շարունակ շարժւում է*):

Գրեթէ ամեն տեղ ընդունում են, որ միւս աշխարհը գնալու ժամանակ մեռելի հոգին ճանապարհին հանդիպում է հրէշների, որոնց հետ կամ պէտք է կռուէ կամ ընծաներով գրաւէ. այդ պատճառով մեռեալների դադաղներում դանազան իրեր են դնում. դանազան անդերում դադաղներից կախում են զինուած մարդկանց նկարներ, զէնքեր և դադանների նկարներ. էսկիմոսները մեռած երեխայի դադաղում դնում են շան գլուխ, որ երեխային պաշտպանէ: Առասպելներում պատմւում է, որ մարդիկ ոչ թէ մի հոգի են ունենում, այլ մի քանիսը. չինացիք, բատտակները ընդունում են 3 հոգի, որոնցից մէկը, երբ մեռնում է չար գործ կատարելով, արեւմուտքում այրւում է, իսկ մնացած երկուսը թափառում են աշխարհի վրայ. կան ցեղեր, որոնք ընդունում են, որ մարդն ունի 7 հոգի: Ամերիկայում դոկուտայ ցեղը 4 հոգի է ընդունում, որոնցից առաջինը թափառում է և կերակուր է փրնտրում, երկրորդը դիակի մօտ է մնում, երրորդը գիւղի շուրջը թռչում է, իսկ չորրորդը թռչում է հոգիների աշխարհը:

Ընդհանրապէս սկզբնական շրջանում մեռածի հոգու վիճակը միւս աշխարհում կախուած է համարւում ոչ թէ մարդու գործերից, այլ մահուան եղանակից. նրանք, որոնք չեն թաղուել շատ տխուր վիճակ են ունենում, նրանք, իրեն ուրուականներ, թափառում են: Մեռածների պաշտամունքը զարգանալու ընդունակ է, ինչպէս այդ տեսնում ենք քրիստոնէական մարտիրոսների և սրբերի մէջ, որ մահկանացու մարդիկ անմահ սրբեր են դառնում: Նոյն ձևի զարգացում ունեն և յունական աստուածները, որոնց

*) Միւս աշխարհի ուր եւ ինչ լինելու, ինչպէս այնտեղ գնալու, հոգու ինչ լինելու մասին մեր ժողովուրդն էլ ունի զանազան աւանդածրւներ. որոնք պարզ երեւում են եւ հէքիաթներում. օրինակ մազի կամուրջը, մուժ աշխարհը. որոնք գուցէ փոխ են առնուած մեր հարեւաններից.

յոյն եւհեմերը կարծում էր, որ սկզբում մարդիկ են եղել, ապա իրենց առաւելութիւնների և ընդունակութիւնների շնորհիւ դարձել են աստուածներ: Շատ ժողովուրդներ ընդունում են, որ իրենք աստուածներից են առաջ եկել, որոնք սկզբում նոյնպէս հաւանօրէն մարդիկ են եղել: Հետաքրքիր են երկուորեակ աստուածների առասպելները. երկուորեակները մեծ մասամբ իրար հակառակ են լինում. մէկը անմահ է լինում, միւսը մահկանացու, մէկը տեսնում է, միւսը կոյր է (Քայլուր և Գիւղուր). մէկը բարի է, միւսը չար. (Որմիզդ և Արհմն) որոնք միմեանց դէմ պայքարում են և երբեմն մէկը միւսին յաղթում է (Հոմուլոս և Հսեմոս). այստեղ սլարվ տեսնում ենք լոյսի և խաւարի. ամառային արևի և ձմեռային մութ գիշերի հակադրութիւնը: Բրազիլիայում երկուորեակ աստուածներ են՝ Կերի և Կամա, որոնց անունները հին գաւառաբարբառով նշանակում է արև և լուսին, որոնք մաքառում են կուլտուրայի համար և ոչ թէ ցեղի նախահայրերն են:

Ինչպէս որ երկնակամարի վրայ հեռու տեղից, ծովի խորքից, գիշերուայ խաւարից ելնում է արևը, այնպէս էլ հերոսի աշխարհ գալը և մանկութիւնը միշտ որոշուած է ինչ որ մշուշով. յաճախ նուաճում, մեծանում է անյայտութեան մէջ, նրան ոչ ոք չի նկատում, մինչև որ սկսում է նրա փառքի շրջանը: Առասպելը սիրում է ծնուած հերոսին ինչ որ հեռու տեղ տանել կամ արկղի մէջ փակել, ջուրը ձգել կամ մութ անտառ տանել, որ հովիւները կամ խեղճ մարդիկ առնեն. մեծացնեն. նշանակում են մեծացել՝ Կիւրոսը, Հոմուլոսը և Հսեմոսը, Իդիսոսը, գերմանական Վոլֆգիտրիխը (գայլից կերակրուած) իրանական Թազաւոր Դարաբան (Դարէն). նոյնն է Մովսէսը. Բարեկական պատմութեան Թազաւորնիւր Սարգօն Ա. (շուրջ 3800 ն. թ. Ք.): Նման յատկութիւններ ունեն և չինական հին Թազաւորները, որոնց անուանում են Շաօ—գֆօ (Բամբուկի Թազաւորներ), որովհետև դրանք առաջ են եկել այն երկխայից, որը Բամբուկի խողովակի մէջ լողում էր ծովի վրայ:

Աստուածների համար լոյսը, կայծակը համարւում են զէնքեր. յաճախ որոտի և լոյսի աստուածները միանում են և դառնում մի աստուած: Մեծ աստուածների մեծ հրաշքներից մէկն է եղել երկիրը երկնքից անջատելը, որոնք առաջ միացած են եղել. հնդկացիները այդ բանը վերագրում են Ռախիդին կամ հին աստուած Վարունային. երբեմն երկնակամարի վրայ արևին պատում են սպիտակ ամպերը շղարշի նման, ինչպէս կանայք են զարգարւում. այս երևոյթը նկատւում է նաև մի քանի հերոս աստուածների կանացի զգեստ կրելում. օրինակ Աքիլլէսին մայրը սկզբում դաստիարակում է աղջկայ զգեստով աղջկերանց մէջ, Թօր

աստուածը հազնում է ֆրէյա աստուածուհու զգեստը, երբ գնում է հսկաների աշխարհը խորամանկութեամբ իւր մուրճը վերցնելու:

Այս աստուածներից մի քանիսը միականի են լինում, ինչպէս գերմանական Վոդանը, որովհետեւ արեւը համարւում է այդ աստծու աչքը. աւանդութիւնն ասում է, որ Վոդանը իւր միւս աչքը տուել է Միւրմիս ասուակին ջուր խմելու համար. այստեղ արդէն երևում են երկուորեակ աստուածների հետքեր: Ընդհանրապէս լոյսի և որոտի աստուածները և սրանց ծառայող կենդանիները կաղում են. կաղ Հեփեստոս աստուածը սկզբում եղել է անսլոյման փութորկի աստուած. էսկիմոսները, հնդկներն ևս ունին կաղ աստուածներ: Այդ աստուածները իրենց մարմնի վրայ ունենում են մի տեղ, որից կարող են վերք ստանալ, ինչպէս Աքիլլէսի կրունկը:

Լուսոյ աստուածներին հակառակ կամ իրր լրացումն երևում է մայրութեան սկիզբը—պտղաբեր երկիրը. երբեմն սա հեզ ու բարեացակամ է, երբեմն մութն ու խորհրդաւոր: Երեւի այս աստուածուհու պաշտամունքը (Մա, Ամմա, Տիրելլա) աւելի զարգացել է Փոքր Ասիայում, ապա անցել է հռոմէացիներին: Նոյն տեսակ բնոյթ ունի և գերմանական Ներտուսը և դժոխքի աստուածուհի «դժգոյն Հէլը» որը երկրի աստուածութեան մի այլ ձևն է միայն:

Աստուածներն էլ առհասարակ փոփոխութիւնների են ենթարկւում, կամ ժողովուրդն է ուրիշներից նոր աստուածներ փոխ առնում և հսկրին մոռանում կամ իրենք աստուածներն են մօղային ենթարկւում և փոխւում. օրինակ երբ ժողովուրդը պատերազմական տրամադրութիւն ունի պատերազմի աստծուն մեծ պաշտամունքի առարկայ է դարձնում, իսկ երբ կուլտուրական աշխատանքն է սկսում գերակշռող տեղ բռնել պատերազմի աստծու տեղ բռնում է ուրիշը: Հնդկների մէջ այս երևում է պարզ կերպով. սկզբնական ռազմական շրջանում Ինդրան պատերազմի աստուածներից ամենից մեծն էր, իսկ յետոյ իւր տեղը զիջում է հոգևորուած Բրախմային:

Վիշնայի առասպելը տարածուած է ամեն տեղ և այս առասպելի տարածուելու մէջ երևում է, ինչպէս արեւելա-ասիական և արեւմտեան եւրոպական կուլտուրաները միմիանց հետ յարաբերեան մէջ են մտնում: Հին աշխարհը, բացառութեամբ Աֆրիկայի, վիշնայի առասպելի ծննդավայրն է. Ամերիկայում բոլորովին չկայ, դրա փոխարէն կայ որոտի թռչունի առասպելը: Վիշնայի առասպելները ամեն տեղ միակերպ չեն զարգացել. արեւելեան Ասիայում այդ առասպելը աւելի հին յիշողութիւններ ունի իւր մէջ, քան եւրոպայում: Վիշնայի առասպելի հիմքը օձի պաշտամունքն է. օձերը համարւում են ջրերի պահապաններ. նրանց

են պատկանում և երկնքում եղած ջրերը. կայծակն էլ երկնքի ջրերի օձն է. երկնքի վրայ թռչունը պէտք է թևեր ունենայ և ահա երկնքի օձն էլ թև է ստանում, որը այսպիսով նոյն է դառնում, ինչ որ վիշապն է: Վիշապին են պատկանում երկնքի ջրերը. նա անձրև է ցանում և պտղաբերութիւն առաջ բերում, ուստի աւելի շուտ բարեացակամ է, քան չարեացակամ: Արեւմտեան ժողովուրդները այս աւելի ևս դարգացրին. եթէ անձրևի ժամանակ փոթորիկ կայ, ուրեմն պայքար կայ. չինացիք էլ ընդունում են, որ այդ ժամանակ վիշապները կուռն են միմիանց հետ. այս դէպքում մօայլ ամպերի մէջ մարմնացած վիշապը չար ոյժն է: Նա գրաւել է երկնքի ջրերը և միայն լոյսի աստծու դէմ խիստ պայքարից յետոյ զիջում է ձեռք բերածը: Այս հնդկական և բարեխաղան առասպելի մի փոփոխակն է. հիւսիսային ժողովուրդները առասպելը իրենց երկրի պայմաններին համաձայնեցրել են. նրանք երաշտից այնպէս չեն վախենում, ինչպէս երկարատև խիստ ձմրանից. լուսոյ աստուածը սպանում է ձմրան վիշապին, կտխարդական քնով քնած երկրին ազատում է նոր կեանքի համար:

Ուրբան աստուածների թիւը մեծանում է, այնքան շերտաւորումը մեծանում է. հին սեմիտների և առհասարակ Ասիայի բնակիչների մէջ բնական դարգանում է տեղական աստուածների պաշտամունքը. ամէն երկիր ունէր իւր յատուկ աստուածը, որը պահպանում էր երկրի անկախութիւնը. երկրի անկախութիւնը կորչում է, երբ այդ երկրի աստծուն թշնամին գերի է տանում: Ասորեստանի թագաւորները յաճախ նուաճուած երկրների աստուածներին գերի էին տանում և դնում իրենց աստուածների տաճարում, որ սրանց ծառայեն: Ոչ միայն առանձին երկրները, այլ և առանձին արհեստների տէրերը առանձին երևոյթները ունէին իրենց համար աստուածներ: Յաճախ մի աստուած հետզհետէ մի քանի մասերի է բաժանւում, ունենում է իւր եղբայր կամ որդի աստուածները, որոնք կառավարում են որոշ մասերը: Այս դէպքում արդէն աստուածներն ստեղծում են իրենց առանձին կառավարութիւնը, ինչպէս երկրի վրայ թագաւորն ունենում է իւր կառավարութիւնը:

Ամեն մի փորձ աստծուն կամ ոգուն որ և է գործողութեամբ ազդելու անուանում ենք պաւստամունք, իրապէս պաշտամունքը մարդու յուզուած դրութեան արտացոլումն է և թէև ուղղուած է լինում իրենից դուրս եղած մի բանի, բայց իսկական նպատակն է հոգու հաւասարակշռութիւնը վերականգնել կամ որոշ խաղաղութիւն ձեռք բերել: Երբ այդ գործողութիւնները կրկնւում են, սովորութիւն են դառնում հետզհետէ կապ է հաստատւում այդ գործողութիւնների և առասպելների մէջ և կազմւում է

պաշտամունքի ամբողջ բարդ համակարգութիւնը: Մարդն առհասարակ նեղ բոպէին կարիք է զգում որ և է օգնութեան որ և է պաշտպանութեան, ինչ ձևով էլ այդ լինի և որտեղից էլ լինի: Աղօթքները և զոհաբերութիւնները կարծես մի տեսակ պարտաւորեցնում են, որ իրեն օգնեն և մեղմացնեն զայրացած աստծուն: Հաստատուած սովորութեան համաձայն կարծում են, որ աստուածները պահաջում են իրենց կանոնաւոր պաշտօն մատուցանել, իսկ արտասովոր դէպքերում արտասովոր նուիրատութիւններ անել: Պաշտամունքը իւր մէջ պէտք է ունենայ և պաշտամունքի և պայքարի միջոցներ: Նախնական ժողովուրդները արևի և լուսնի խաւարման ժամանակ աշխատում են չար ոյժերին դիմագրել ազմուկներով, նետաձգութեամբ. այսպիսով իրենց երկիւղը մի տեսակ թեթևացնում են իրենք իրենց սրտապընդում են:

Պաշտամունքի և աղօթքի պարզ ձևերը նոյնն են, ինչ որ մարդկանցից ողորմութիւն խնդրելու ձևերը: Դաուէօ ցեղի մէջ աղօթքն սկսւում է երկար սուլոցով և ամեն մի խնդրից յետոյ սուլոցը կրկնւում է, որ աստուած նորից չնիրհէ. աղօթքում ասում են. «Ըվ ամենասուրբ աստուած, դու ամեն բան գիտես. դու գիտես իմ անունը, գիտես իմ աշխատքս և լսում ես ինձ. (սուլոց) դու գիտես, որ ես դող չեմ, որ ես ոչ ոքի չեմ սպանել, ամուսնական ուխտս չեմ խանգարել (սուլոց): Ես միշտ ճշմարտութիւնն եմ ասել, կնոջս և գերիներիս գնել եմ վարձն ամբողջովին վճարելով և ոչ ոքի ոչինչ պարտական չեմ. (սուլոց): Ո՛վ ամենասուրբ աստուած, դու նոյնպէս գիտես, որ ես չեմ նախանձում իմ հարևանի կնոջը, տանը և գերիներին, չեմ նախանձում նրա բանանին, արմաւենուն, ոչ էլ նրա երկու այծերին, ոչ էլ նրա, մի քիչ առաջ գնած նոր գլխարկին... Ո՛վ ամենասուրբ աստուած, տուր ինձ բանան, արմաւենու պտուղներ և այլ կերակուրներ: Ո՛վ աստուած մի մոռանար տալ նաև Եւրոպական ճրագ, ի միջի այլոց նաև ձէթ»: Երևում է, ինչպէս ուզում է աստծու խղճահարութեան զգացումը շարժել և նոր բարիքներ ստանալ:

Զոհաբերութեան դէպքում յաճախ հիւանդ կամ նեղ գրութեան մէջ եղող մարդը իւր փոխարէն ուղարկում է, որ աստծուն զօհ բերէ ուրիշը և զոհաբերութեան արդիւնքը երբեմն ոչ միայն տնմիջական, այլ և ուրիշ նպատակների համար օգտակար է լինում:

(Շարունակելի)